Կարգապահական գործ թիվ ԿԳ-19080

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2020 թվականի հունվարի 21-ի թիվ 05-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/04-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԿԱՐԻՆԵ ՍԻՄԻԴՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրչյանի և Կարեն Սարդարյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի,

քննության առնելով փաստաբան Կարինե Սիմիդյանին (արտոնագիր՝ թիվ 944) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Լուսինե Մանգասարյանը (**այսուհետ՝ նաև Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է հետևյալը:

Դիմողն ունեցել է խնդիրներ, որոնք լուծելու համար ծանոթացվել է փաստաբան Կարինե Սիմիդյանի հետ: Դիմողը նրան պատմել է գործի բոլոր հանգամանքները, որին ի պատասխան՝ Կարինե Սիմիդյանը խոստացել է Դիմողին գործը լուծել վերջինիս օգտին: Կողմերը պայմանավորվել են, որ Դիմողը Կարինե Սիմիդյանին վերջինիս ծառայությունների համար վճարելու է 2.000 (երկու հազար) ԱՄՆ դոլար, Դիմողը պետք է հոգա նաև Սիմիդյանի ճանապարհածախսը: Փաստաբանը միանգամից Դիմողից պահանջել և ստացել է 80.000 (ութսուն հազար) ՀՀ դրամ՝ ասելով, որ պետք է պետական մուծում անի: Հոկտեմբերի 7-ին Կարինե Սիմիդյանը Դիմողից պահանջել և ստացել է 500 (հինգ հարյուր) ԱՄՆ դոլար: Նոյեմբերին Սիմիդյանը Դիմողից պահանջել և ստացել է 85.000 (ութսունհինգ հազար) ՀՀ դրամ, ապա պահանջել է 1000 (հազար) ԱՄՆ դոլար, սակայն ստացել է 700 (յոթ հարյուր) ԱՄՆ դոլար: Դրանից հետո

փաստաբանը Դիմողին չի զանգել և վերջինիս հեռախոսազանգերին չի պատասխանել, հեռախոսով նամակ էր գրում, որ Դիմողին կզանգահարի, բայց չէր զանգահարում: Դատերին փաստաբանը չէր մասնակցում՝ բերելով տարբեր պատճառաբանություններ: Նախավերջին դատական նիստին փաստաբան Կարինե Սիմիդյանը բողոք է գրել դատավորի դեմ՝ նիստից 15 րոպե ուշանալու համար, ինչի հետևանքով Դիմողն ու փաստաբանը նիստին չեն մասնակցել: Վերջին նիստին փաստաբանը զանգահարել է Դիմողին և հարցրել, թե տունն ում անունով է գրանցված:

Ստանալով դատարանի վճիռը՝ Դիմողը հասկացել է, որ փաստաբանը ոչինչ չի արել, այլ իրեն միայն Դիմողի գումարներն են հետաքրքրել: Դիմողը զանգահարել է փաստաբանին՝ խնդրելով բացատրել՝ վճռի մեջ ինչ է գրված, սակայն փաստաբանը նշված խնդրանքը չի կատարել: Դիմողը գնացել է փաստաբան Կարինե Սիմիդյանի մոտ և չվստահելով նրան՝ խնդրել է այլևս իր գործով չզբաղվել և քանի որ, ըստ Դիմողի, փաստաբանը ոչինչ չի արել, փաստաբանից պահանջել է նաև վերադարձնել վճարված գումարները: Կարինե Սիմիդյանը Դիմողին ասել է, որ 80.000 (ութսուն հազար) և 85.000 (ութսունհինգ հազար) ՀՀ դրամով կատարել է պետական մուծում, սակայն չուներ պետական մուծման կատարման փաստը հավաստող անդորրագիր: Ի պատասխան Դիմողի նախազգուշացման, որ կդիմի օրինական միջոցների՝ փաստաբանը խոստացել է գումարի մի մասը վերադարձնել օգոստոսի սկզբում, իսկ մյուս մասը՝ օգոստոսի վերջում:

Սիմիդյանը Դիմողին վերադարձրել է 1000 (հազար) ԱՄՆ դոլար, սակայն մնացած գումարը վերադարձնել չի ցանկանում՝ պահանջելով Դիմողից ապացուցել, որ Դիմողն իրեն գումար է տվել: Ըստ Դիմողի՝ փաստաբանն իրեն հայհոյել է և ահաբեկել՝ ասելով, որ մարդիկ կգան և Դիմողին ինչ պետք է, կանեն:

Ըստ Դիմողի՝ ներկայում փաստաբանն իրեն պարտք է 165.000 (մեկ հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ և 700 (յոթ հարյուր) ԱՄՆ դոլար:

Դիմողը նաև նշել է, որ այլ հարցով կրկին դիմել է փաստաբան Կարինե Սիմիդյանին ՀՀ ԱՆ դատական հարկադիր կատարման ծառայությունից գումար ստանալու վերաբերյալ: Փաստաբանը Դիմողին խոստացել է, որ հարցը կլուծի, պահանջել է 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ՝ պետական մուծում կատարելու համար, սակայն պարզվել է, որ դա սուտ է:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի կողմից 27.05.2019թ. թիվ 178-Ա/ԿԳ-19080 որոշմամբ փաստաբան Կարինե Սիմիդյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ նաև Կանոնագիրք)** 2.7.2, 3.1.8 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

30.05.2019թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Նարինե Սարգսյանին (**այսուհետ՝ նաև Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

Պալատի խորհրդի նիստերին Դիմողը ներկայացել է և իր բացատրության մեջ վերահաստատել է իր դիրքորոշումը՝ ընդունելով, որ իր կողմից Պատասխանողին վերագրվող վարքագծի վերաբերյալ տեղյակ է եղել 2017-2018թթ.-ից:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Դիմողի դիմումի վերաբերյալ Պատասխանողին առաջարկվել է ներկայացնել գրավոր բացատրություն, որի առթիվ վերջինիս կողմից Պալատ է ներկայացվել բացատրություն:

Բացատրությամբ Պատասխանողը հայտնել է,որ թիվ ԿԴ1/1971/02/16 գործով Դիմողը և Անահիտ ու Մանուկ Մանգասարյանները հանդիսացել են պատասխանողներ: Դիմողն իր մտերիմ ընկերուհու միջոցով 2017թ. դիմել է Պատասխանողին և հայտնել, որ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում է գտնվում քաղաքացիական գործ, որով իր հորեղբոր ընտանիքի անդամները դիմել են դատարան գեոդեզիական չափագրման աշխատանքներին չխոչընդոտել պարտավորեցնելու պահանջի մասին, որը Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 05.10.2016թ. որոշմամբ ընդունվել է վարույթ:

Ըստ Պատասխանողի՝ Դիմողն իր դիմումում նշել է սուտ տեղեկություններ և զրպարտում է, որ Պատասխանողը չի մասնակցել դատական նիստերին, չի պատասխանել հեռախոսազանգերին, դատավորի վրա բողոք է գրել կամ Դիմողին վիրավորել է:

Դիմողը, երբ ներկայացրել է փաստաթղթերը Պատասխանողին, արդեն մի քանի դատական նիստի մասնակցել էին, սակայն չէին կարողանում հասկանալ, թե ինչի մասին պետք է խոսեն կամ առարկեն:

Պատասխանողը հայտնել է, որ իր և Դիմողի միջև կնքվել է պայմանագիր, որում նշվել է, որ փաստաբանը որևէ երաշխավորություն չի տալիս իր ստանձնած պարտավորությունների կատարման արդյունքի համար: Բացի այդ, քանի որ Դիմողն ունեցել է ֆինանսական խնդիրներ, գումարի վճարումը կատարվել է մաս-մաս:

Պատասխանողը պնդում է, որ պատշաճ կերպով մասնակցել է դատական նիստերին, սակայն դատական նիստերը տարբեր պատճառաբանություններով հետաձգվել են: Դիմողը ևս Պատասխանողի հետ ներկա է եղել բոլոր նիստերին: Պատասխանողը նաև դատարան է ներկայացրել առարկություններ: Երբ դատավորը Դիմողին հարցեր է ուղղել, չնայած նախորդիվ Պատասխանողը բացատրել էր ամեն ինչ, Դիմողը միջամտել է և դատարանին ներկայացրել հակառակ պատասխաններ:

Դատարանի վճիռը ստանալուց բավական ժամանակ անց Դիմողը եկել է Պատասխանողի մոտ և հայտնել, որ ուզում է, որպեսզի վերաքննիչ բողոք գրվի, սակայն ունի այլ փաստաբան, ինչպես նաև պահանջել է վերադարձնել իր վճարած գումարը: Հասկանալով, որ Դիմողը փորձում է ձայնագրել իրեն՝ Պատասխանողը խնդրել է Դիմողին անջատել հեռախոսը: Հաշվի առնելով, որ Դիմողն ունի հիվանդ մայր, դեղեր գնելու և բուժվելու կարիք ունի՝ Պատասխանողը վերադարձրել է 1000 (մեկ հազար) ԱՄՆ դոլար, իսկ գումարի մնացյալ մասով Պատասխանողը Դիմողին բացատրել է, որ փաստաբանն իրավունք ունի գումարի մի մասը պահել որպես բաց թողնված օգուտ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ փաստաբանը կարող էր նույն ժամանակահատվածում այլ պատվիրատուների հետ կնքել պայմանագրեր և ստանալ եկամուտ:

Ըստ Պատասխանողի՝ ինքը գործի ամբողջ փաթեթը փոխանցել է Դիմողին:

Պատասխանողը նաև պնդում է, որ իր բացակայությամբ իր գրասենյակի մոտ Դիմողն իրեն պահել է ոչ պատշաճ կերպով, վիրավորական արտահայտություններ է անում Պատասխանողի աշխատակիցների մոտ և ահաբեկում է, որ «մարդ կբերի» իր վրա, օգտագործում է կնոջը ոչ վայել արտահայտություններ և հայհոյանքներ: Բացի այդ, Դիմողը, ըստ Պատասխանողի, նաև դիմել է Կոտայքի մարզի ոստիկանություն, որտեղ Պատասխանողը նշված փաստի վերաբերյալ տվել է բացատրություն, և գործի հարուցումը մերժվել է:

Ըստ Պատասխանողի՝ Դիմողի մոտ տպավորություն է ստեղծվել, որ փաստաբանը պարտավոր է անվճար աշխատել իր վստահորդի համար:

Պատասխանողը Խորհրդի նիստին չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի ժամանակի և վայրի մասին: Պատասխանողը Խորհրդին ծանուցել է, որ պնդում է իր դիրքորոշումը, ավելացնելու բան չունի և խնդրել է Խորհրդին գործը քննել իր բացակայությամբ:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

29.07.2019թ. Նախապատրաստողը կազմել է եզրակացություն, որում նշել է, որ փաստաբան Կարինե Սիմիդյանի կողմից Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրքի 2.7.2, 3.1.8 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման փաստը չի հաստատվում գործում առկա ապացույցներով:

Կարգապահական գործը Պալատի խորհրդին է հանձնվել 30.07.2019թ.:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 24.09.2019թ. ժամը 19:00-ին, 14.01.2020թ. ժամը 19:40-ին և 21.01.2020թ. ժամը 18:15-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Պալատի խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

Դիմողը հանդիսանում է ԿԴ1/1971/02/16 քաղաքացիական գործով Պատասխանողի վստահորդը:

Նշյալ փաստը հաստատվում է Դիմողի դիմումով և բացատրությամբ, Պատասխանողի բացատրությամբ, Դիմողի և Պատասխանողի միջև կնքված՝ փաստաբանական ծառայություն մատուցելու վերաբերյալ պայմանագրով, «Դատալեքս»

տեղեկատվական համակարգից արված քաղվածքով, ԿԴ1/1971/02/16 գործով հայցի դեմ Պատասխանողի գրած առարկությամբ:

Դիմողը Պատասխանողին վերագրվող վարքագիծը հայտնաբերել է 2017-2018թ..:

Նշյալ փաստը հաստատվում է Դիմողի բացատրությամբ, «Դատալեքս» տեղեկատվական համակարգից արված քաղվածքով, Դիմողի և Պատասխանողի միջև կնքված՝ փաստաբանական ծառայություն մատուցելու վերաբերյալ պայմանագրով:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները</u>.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Կարինե Սիմիդյանը փաստաբան է հանդիսանում 24.10.2009 թվականից, և 2015-2020թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 5 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (3 ավարտված և 2 ընթացիկ), չհաշված սույն կարգապահական գործը:

Խորհրդի 30.01.2015թ. թիվ ԿԳ/24-Ա որոշմամբ Կարինե Սիմիդյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ նկատողության անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար, և տույժը մարվել է:

Խորհրդի 11.08.2018թ. թիվ ԿԳ/194-Ա որոշմամբ Կարինե Սիմիդյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ խիստ նկատողության և լրացուցիչ կարգապահական տույժի՝ մասնակցության լրացուցիչ վերապատրաստման դասընթացների՝ 8 ակադեմիական ժամ ժամաքանակով Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման համար, և հիմնական տույժը մարվել է, իսկ լրացուցիչ տույժը մարված չէ:

Խորհրդի 17.12.2018 թիվ ԿԳ/221-Ա որոշմամբ Կարինե Սիմիդյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ նկատողության անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար, և տույժը մարվել է:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը</u>.

Պալատի խորհուրդը գտնում է, որ Պալատի նախագահի կողմից 27.05.2020թ. թիվ 178-Ա/ԿԳ-19080 որոշմամբ փաստաբան Կարինե Սիմիդյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.1.8 ենթակետի համաձայն՝ *փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին*

կատարումը:

Կանոնագրքի 3.6.1 համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Օրենքի 39.3 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հիմքը ծագելուց մեկ տարի հետո: Սույն մասում նշված ժամկետներն անցնելուց հետո կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ խախտմամբ հարուցված վարույթը ենթակա է կարճման:*

Դիմողի դիմումի շրջանակներում Պատասխանող փաստաբան Կարինե Սիմիդյանի նկատմամբ կարգապահական պատասխանատվության հիմք կարող էր լինել իր ենթադրյալ ոչ բարեխիղճ վերաբերմունքը Դիմող Լուսինե Մանգասարյանի նկատմամբ և վերջինիս շահերը ոչ պատշաճ պաշտպանելը՝ ներառյալ Դիմողի գործով դատական նիստերին, առանց հարգելի պատճառի չներկայանալը, գործի ընթացքի մասին Դիմողին չտեղեկացնելը, Դիմողի գործով Պատասխանողի ոչ արհեստավարժ գործելակերպը, որպիսի վարքագիծը հանդիսանում է Օրենքի և Կանոնագրքի խախտում:

Սակայն Դիմողի կողմից Պատասխանողին վերագրվող վարքագիծը տեղի է ունեցել 2017-2018թթ., այն է՝ Դիմողի և Պատասխանողի միջև ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքվել 12.05.2017թ.-ին, և Պատասխանողին վերագրվող ոչ իրավաչափ վարքագիծը Դիմողը հայտնաբերել է 2017-2018թթ.-ին, ինչի մասին վկայել է նույն Դիմողը, ինչպես նաև Դիմողի կողմից Պատասխանողին վերագրվող անգործության՝ Դիմողի գործով դատական նիստերին չմասնակցելու ժամանակացույցի մասին տեղեկատվությունն առկա է «Դատալեքս» տեղեկատվական համակարգում, որտեղ Դիմողի կողմից վկայաբերվող դատական նիստերը թվագրված են 2017 կամ 2018թթ.-ով:

Փաստորեն, Դիմողի կողմից Պատասխանողին մեղսագրվող վարքագիծը տեղի է ունեցել Դիմողի կողմից Պալատ դիմում ներկայացնելուց ավելի քան մեկ տարի առաջ: Մինչդեռ, ինչպես նշված է Օրենքի 39.3 հոդվածի 3-րդ մասում, կարգապահական վարույթ կարող է հարուցվել կարգապահական հիմքը ծագելուց, այն է՝ փաստաբանի ենթադրյալ իրավախախտ վարքագիծը թույլ տրվելուց ոչ ուշ քան 1 տարի անց: Այդ ժամկետն անցնելուց հետո փաստաբանը չի կարող ենթարկվել կարգապահական պատասխանատվության, և, համապատասխանաբար, հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Հետևաբար, Պալատը գտնում է, որ Դիմողի կողմից մատնաշված հանգամանքները և Պատասխանողին վերագրվող վարքագիծը տեղի է ունեցել Օրենքի նշյալ դրույթով նախատեսված ժամկետն անցնելուց հետո, ուստի՝ ըստ էության, չի կարող քննարկվել Պալատի կողմից, իսկ Պատասխանողի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Պալատի նախագահի 27.05.2019թ. թիվ 178-Ա/ԿԳ-19080 որոշմամբ փաստաբան Կարինե Սիմիդյանի (արտոնագիր՝ թիվ 944) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Կարինե Սիմիդյանին և Դիմողին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստա.նալու օրվանից մեկ ամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյան

21 հունվարի, 2020թ.
թիվ ԿԳ/04-Ա
ք. Երևան